ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԲՌՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Էդգար Կարապետյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունները հակահասարակական վարքագծի առավել վտանգավոր դրսևորումներ են, և այս դրույթն առանձին ապացուցման և հիմնավորման կարիք չունի:

Այս հանցատեսակների դեմ պայքարի համար պետությունը պետք է օգտագործի իր գործիքակազմում եղած բոլոր միջոցները և հնարավորությունները: Օրենսդրական փոփոխությունների արդի փուլում հույժ կարևոր է արտասահմանյան երկրների դրական փորձի ուսումնասիրությունը, որպեսզի մեր օրենսդրական և իրավակիրառ բնագավառներում ներդրվեն այն ռացիոնալ և արդյունավետ միջոցներն ու մոտեցումները, որոնք հնարավորություն են տալիս առավել թիրախային և համակողմանի պայքար մղելու հանրավտանգ վարքագծի այս դրսևորումների դեմ: Ընդ որում, այդ փորձի ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ և չպետք է միտված լինի արտասահմանյան տարբեր երկրների քրեական օրենսդրություններում առկա իրավակարգավորումների մեխանիկական պատճենմանը մեր օրենդրության մեջ: Յուրաքանչյուր հասարակություն իր ուղին է անցնում, ունի ուրույն իրավագիտակցություն, բարոյականություն ու մշակույթ, և այն դրույթները, որոնք օրինակ՝ արդյունավետ են Ֆրանսիայում, կարող են հակառակ ազդեցությունն ունենալ ՀՀ-ում: Ասվածն ամենևին չի նշանակում, որ արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը զուտ տեսական բնույթ ունի, և գործնականում դրա կիրառությունն աննպատակահարմար է կամ անհնարին, ուղղակի պետք է առաձնացնել և տեղայնացնել այն իրավակարգավորումները, որոնք կարող են արդյունավետ ներդրվել մեր օրենսդրության մեջ և նպաստել հանցագործությունների այս խմբի դեմ առավել արդյունավետ պայքարին, այս հանցատեսակների ավելի ճիշտ որակմանը և դրանց համար համարժեք քրեական պատասխանատվության ու պատժի նախատեսմանը:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի[1] (գիրք II «Մարդու դեմ ուղղված հանցանքներ և զանցանքներ», բաժին II «Մարդու դեմ ուղղված ոտնձգություններ», գլուխ II «Անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգություններ», մաս 3 «Սեռական ագրեսիաների մասին», առաջին պարագրաֆ) հոդված 222–23-ը սահմանում է բռնաբարություն հասկացությունը՝ որպես ցանկացած սեռական ներթափանցման ակտ (ինչ բնույթ էլ որ այն ունենա), որը կատարվել է այլ անձի նկատմամբ՝ ֆիզիկական բռնություն գործադրելու, սպառնալիքի, հարկադրանքի կամ խաբեության միջոցով[2]: Բռնաբարությունը պատժվում է տասնհինգ տարի ժամկետով ազատազրկմամբ: Հոդված 222-24-ն ավելի խիստ պատասխանատվություն է սահմանում (քսան տարի ժամկետով ազատազրկում) բռնաբարության համար, որը՝

[1] Новый Уголовный кодекс Франции / Под ред. Н.Ф.Кузнецовой, Э.Ф.Побегайло. М., 1993.
[2] https://www.legifrance.gouv.fr/content/download/1957/13715/.../Code_33.pdf

1) հանգեցրել է քրոնիկ հիվանդության կամ վնասվածքի,

2) կատարվել է տասնհինգ տարին չլրացած անչափահասի նկատմամբ,

3) կատարվել է այնպիսի անձի նկատմամբ, ում տարիքից, հիվանդությունից, ֆիզիկական կամ հոգեկան թերությունից կամ հղիությունից բխող անօգնական վիճակն ակնհայտ կամ հայտնի է կատարողին,

4) կատարվել է (բնական, օրինական կամ որդեգրող) վերընթաց ազգակցական կապեր ունեցող անձի կամ ցանկացած այլ անձի կողմից, ով իշխանություն ունի տուժողի նկատմամբ,

5) կատարվել է այն անձի կողմից, ով չարաշահում է իր պաշտոնեական լիազորություններից բխող իշխանությունը,

6) կատարվել է մի քանի անձանց կողմից, ովքեր գործել են որպես համակատարողներ կամ հանցակիցներ,

7) կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով,

8) եթե հանցավորը տուժողի հետ կապ է հաստատել հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ անորոշ շրջանակի անձանց հաղորդագրություններ ուղարկելու միջոցով[1]:

Բռնաբարությունը համարվում է առավել ծանրացնող հանգամանքներով կատարված, եթե այն հանգեցնում է տուժողի մահվան (հոդված 222-25, պատժվում է ազատազրկմամբ երեսուն տարի ժամկետով), կամ եթե դրան նախորդում, ուղեկցում կամ հաջորդում են դաժանության դրսևորումներ, կամ տուժողը ենթարկվում է տանջանքների (հոդված 222-26, պատժվում է ցմահ ազատազրկմամբ):

Մեր կողմից ընդունելի է սեռական հանցագործությունների նկատմամբ խիստ պատժողական քաղաքականությունը, որը, սակայն, ֆրանսիական քրեական օրենսդրությամբ երբեմն հասնում է ծայրահեղությունների: Այս պարագայում դաժանություններ կամ տանջանքներ հասկացությունները որոշակիացված չեն, իսկ ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ նախատեսելը, կարծում ենք, այնքան էլ հիմնավորված չէ:

Վերոշարադրյալ իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական օրենսդրությամբ բռնաբարությունից տուժող կարող են լինել թե՛ իգական և թե՛ արական սեռի ներկայացուցիչները: Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է տուժողի մարմին ներթափանցելու սեռական ագրեսիայի համար: Սեքսուալ ագրեսիայի այլ դրսևորումները ավելի մեղմ են պատժվում (§ 2. «Այլ սեքսուալ ագրեսիաներ»):

Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործություններին, ապա որպես բռնաբարության ծանրացնող հանգամանք նախատեսված է տասնհինգ տարին չլրացած անչափահասի նկատմամբ կատարման դեպքերը: Տասնհինգ տարին լրացած երեխաների նկատմամբ կատարված բռնաբարությունը որակվում է ընդհանուր հիմունքներով:

Ֆրանսիական օրենսդրի այս մոտեցումը նույնպես մեր կողմից ընդունելի չէ, քանի որ թույլ չի տալիս համակողմանիորեն պաշտպանել անչափահասների սեռական ազատության և անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հոդված 222-24-ի երրորդ մասով խոսվում է նաև տարիքից բխող անօգնական վիճակի մասին, սակայն այստեղ տարիքային սահմանները որոշակիացված չեն. իրավական որոշակիությունն այս առումով բացակայում է:

[1] http://constitutions.ru/?p=5859&page=3

ԳԴՀ քրեական օրենսգրքի 13-րդ բաժինը ունի հետևյալ վերտառությունը՝ «Սեռական ինքնորոշման դեմ ուղղված հանցագործություններ»[1]: Այս բաժնի §177-ը վերաբերում է սեքսուալ գործողություններին հարկադրելուն և բռնաբարությանը: Քննարկվող արարքն ունի հետևյալ բնորոշումը՝ նա, ով

1) ուժի գործադրմամբ,

2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության սպառնալիքով,

3) տուժողի անօգնական վիճակն օգտագործելով

անձին հարկադրում է հանցավորի կամ երրորդ անձի հետ սեռական կապի մեջ մտնել կամ կատարում է նրա նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողություններ, պատժվում է ազատազրկմամբ ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով[2]:

Այսպիսով, գերմանական քրեական օրենսդրության համաձայն, սեռական բռնությունից տուժող կարող են լինել թե՛ իգական և թե՛ արական սեռի ներկայացուցիչները: ՀՀ քրեական օրենդրության արդի իրավակարգավորմամբ բռնաբարությունից տուժող կարող է լինել միայն իգական սեռի ներկայացուցիչը: ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում բռնաբարության հանցակազմը բացակայում է: Նախագծի հոդված 190-ը պատասխանատվություն է սահմանում սեռական բնույթի բռնի գործողությունների համար: Այս հոդվածը սահմանում է՝ բնական սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ, այդ թվում՝ համասեռական գործողությունները, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով՝ պատժվում է…: Փաստորեն, նոր քրեական օրենսգրքի նախագծում արդեն իսկ որոշակիորեն հաշվի է առնվել գերմանական փորձը, սակայն դժվար է կանխորոշել՝ արդյոք այս մոտեցումը կստանա օրենսդրական ամրագրում:

Գերմանական օրենսդրության վերլուծությունից հստակ պարզ չէ նաև, թե որ գործողություններն են համարվում բռնաբարություն, և որոնք՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ: Ըստ էության այս խնդրի լուծումը թողնված է իրավական դոկտրինային և իրավակիրառների հայեցողությանը, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ մոտեցում չէ, քանզի չի ապահովում իրավական որոշակիություն և կարող է տարամեկնաբանությունների տեղիք տալ՝ խոչընդոտելով հանցագործությունների որակման գործընթացը:

Հարկ է նկատել, որ գերմանական քրեական օրենսդրությամբ երեխաների (անչափահասների) նկատմամբ կատարված բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները առանձին օրենսդրական ամրագրում չեն ստացել և չեն համարվում համապատասխան հանցագործությունների ծանրացնող հանգամանքներ: Կարծում ենք՝ ակնհայտ է, որ երեխաների նկատմամբ նման արարքների կատարումն օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ և կարող է խաթարել երեխայի ֆիզիկական ու հոգեկան հետագա զարգացումը: Այս առումով հայրենական օրենսդրի մոտեցումն ավելի արդարացված է թվում, քանզի անչափահասի նկատմամբ կատարված սեռական բռնության տարբեր դրսևորումների համար նախատեսված է ավելի խիստ պատասխանատվություն, ավելին՝ անչափահասի տարիքը դիֆերենցվել է, և տասնչորս տարին չլրացած անչափահասի բռնաբարությունը կամ նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարումը նախատեսված է առավել ծանրացնող հանցակազմով:

---

[1] Уголовный кодекс Германии / Под ред. Д.А.Шестакова. СПб., 2002.

[2] http://constitutions.ru/?p=5854 Уголовный кодекс ФРГ.

ԳԴՀ քրեական օրենսգրքում առանձնացված են մի շարք հոդվածներ, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում անչափահասների դեմ ուղղված սեռական ոտնձգությունների համար: Պարագրաֆ 174-ը պատասխանատվություն է սահմանում տասնվեց տարին չլրացած անչափահասի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար այն անձի կողմից, ով իրականացնում է անչափահասի դաստիարակության, խնամքի կամ կրթելու պարտականություն[1]: Նույն պարագրաֆի երկրորդ մասով քրեական պատասխանատվություն է սահմանվում նույն արարքի կատարման համար տասնութ տարին չլրացած անչափահասի նկատմամբ, ինչպես նաև այն իրավիճակների համար, երբ անչափահասի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ են կատարում՝ օգտագործելով վերջինիս աշխատանքային, ծառայողական, կրթական կամ այլ կախվածությունը: Սույն պարագրաֆի երրորդ մասը պատասխանատվություն է սահմանում սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար հանցավորի տասնութ տարին չլրացած կենսաբանական կամ որդեգրված երեխայի նկատմամբ կամ այն դեպքերի համար, երբ հանցավորը թույլ է տալիս, որ այդ երեխան իր հետ ունենա սեքսուալ հարաբերություններ: Գերմանական քրեական օրենսգրքի §174-ով պատասխանատվություն է սահմանվում նաև այն դեպքերի համար, երբ անձը սեքսուալ հարաբերություններ է ունենում իր խնամքին հանձնված անձի ներկայությամբ կամ էլ վերջինիս ստիպում է իր ներկայությամբ ունենալ սեռական հարաբերություններ կամ կատարել սեքսուալ բնույթի գործողություններ:

ԳԴՀ քրեական օրենսգրքի §176-ը պատասխանատվություն է սահմանում երեխաների նկատմամբ սեռական չարաշահումների համար (այս դեպքում խոսքը վերաբերում է այն երեխաներին, ովքեր հանցավորի խնամքի ներքո չեն): Այս քրեաիրավական արգելքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ անձը սեռական բնույթի գործողություններ է կատարում տասնչորս տարին չլրացած երեխայի նկատմամբ կամ թույլ է տալիս վերջինիս իր նկատմամբ կատարել սեռական բնույթի գործողություններ: Նույն պատիժն է սահմանվում նաև այն անձի նկատմամբ, ով հակում է երեխային այլ անձի հետ կատարելու սեքսուալ բնույթի գործողություններ: Քննարկվող պարագրաֆի երրորդ մասով պատասխանատվություն է սահմանվում երեխայի ներկայությամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, երեխային սեքսուալ բնույթի գործողություններ կատարելուն հակելու, ինչպես նաև այն դեպքերի համար, երբ հանցավորը երեխայի նկատմամբ ներգործում է՝ նրան պոռնոգրաֆիկ բովանդակության նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ ներկայացնելու կամ վերջինիս հետ պոռնկագրական բնույթի զրույցներ ունենալու համար: 176a§-ը պատասխանատվություն է սահմանում երեխայի նկատմամբ ծանր սեռական չարաշահումների համար, որոնց թվին են պատկանում՝ 1) երեխայի հետ կենակցելը, նրա նկատմամբ սեռական բնույթի այնպիսի գործողություններ կատարելը, որոնք կապված են երեխայի մարմնի մեջ ներթափանցման հետ, ինչպես նաև երեխային թույլատրելը, որ վերջինս հանցավորի նկատմամբ կատարի նմանաբնույթ արարքներ, 2) նույն գործողությունները մի խումբ անձանց կողմից համաձայնեցված կատարելը, 3) այս արարքների հետևանքով երեխայի առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք ստեղծելը կամ նրա ֆիզիկական կամ հոգեկան զարգացմանը էական վնաս պատճառելը, 4) երեխայի նկատմամբ ծանր սեռական հանցանք կատարելն այն անձի կողմից, ով վերջին հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել նմանաբնույթ հանցագործության համար: Որպես քննարկվող հանցատեսակի առավել վտանգավոր դրսևորումներ սահմանված են՝

[1] https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/

1) նույն հանցանքի կատարումը՝ զուգորդված երեխայի առողջությանը ծանր վնաս պատճառելով, 2) երեխային կյանքից զրկելու սպառնալիքով զուգորդված:

ԳԴՀ քրեական օրենսգրքի §176b-ն պատասխանատվություն է սահմանում երեխայի նկատմամբ կատարված մահացու ելքով սեքսուալ բնույթի գործողությունների համար: Այս նորմում նշվում է, որ եթե անձը, կատարելով §176-ով կամ §176a-ով նախատեսված հանցանքները, նույնիսկ եթե թեթևամտորեն երեխային զրկում է կյանքից, ապա պատժվում է ցմահ ազատազրկմամբ կամ ոչ պակաս, քան տասը տարի ժամկետով ազատազրկմամբ[1]:

Պարագրաֆ 180-ը պատասխանատվություն է սահմանում երեխաների սեքսուալ գործողություններին նպաստելու համար: Այս նորմի համաձայն՝ պատասխանատվության է ենթակա այն անձը, ով նպաստում է տասնվեց տարին չլացած անչափահասի կամ երրորդ անձի կողմից տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողությունների կատարմանը՝ միջնորդելով կամ համապատասխան պայմաններ ստեղծելով: Այս նորմով պատասխանատվություն է սահմանվում նաև կավատության տարբեր դրսևորումների համար, իսկ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված են այն իրավիճակները, երբ այս արարքները կատարվում են տասնութ տարին չլրացած այն երեխաների նկատմամբ, ովքեր հանձնված են հանցավորի խնամքին, դաստիարակությանը կամ գտվում են նրանից ծառայողական, աշխատանքային, կրթական կամ այլ կախվածության մեջ: Պարագրաֆ 180a-ն պատասխանատվություն է նախատեսում պոռնկությանը նպաստելու համար: Այս քրեաիրավական արգելքը, փաստորեն, չի դասվում երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների շարքին, սակայն դրա երկրորդ մասի առաջին կետով պատախանատվություն է սահմանվում տասնութ տարին չլրացած երեխային պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան, կացարան կամ այլ վայր տրամադրելու համար: Հանրավտանգ վարքագծի այս դրսևորումը, թերևս, կարող է դիտարկվել երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունների համատեքստում, չնայած որոշակի վերապահումներով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տասնվեց տարին լրացած երեխաներն ունեն սեռական ազատության իրավունք:

ՀՀ քրեական օրենսգրքում համանման իրավակարգավորումներ նախատեսված են քսաներորդ և քսանհինգերորդ գլուխներում, որոնք համապատասխանաբար վերաբերում են ընտանիքի ու երեխայի շահերի դեմ ուղղված և հասարակական կարգի ու բարոյականության դեմ ուղղված հանցագործություններին: Մասնավորապես՝ հոդված 166-ով պատասխանատվություն է սահմանվում երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար, իսկ հոդված 262-ի երկրորդ մասի վեցերորդ կետով՝ անչափահասին օգտագործելով պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար: Կարծում ենք, սակայն, որ այս արարքները առաջին հերթին ոտնձգում են երեխայի ֆիզիկական և հոգեկան բնականոն սեռական զարգացման դեմ, և դրանք պետք է նախատեսել առանձին գլխով՝ «Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործություններ» վերտառությամբ: Այս առումով գերմանական օրենսդրի մոտեցումն ավելի ճիշտ է թվում: Չնայած ԳԴՀ քրեական օրենսգրքով այս արարքներն առանձնացված չեն առանձին գլխով, սակայն սահմանված են «սեռական ինքնորոշման դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում:

[1] Criminal Code (Strafgesetzbuch, StGB) German Law Archive
https://germanlawarchive.iuscomp.org

Նիդերլանդների քրեական օրենսգրքում[1] սեռական հանցագործություններին վերաբերող նորմերը տեղակայված են երկրորդ գրքի XIV-րդ բաժնում: Հոդված 242-ի համաձայն՝ անձը, ով բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, այլ գործողություններով կամ սպառնալիքներով ստիպում է ուրիշ անձի ենթարկվելու սեռական բռնության, որը ենթադրում է տուժողի մարմնի մեջ սեռական ճանապարհով ներթափանցում, մեղավոր է բռնաբարության համար և պատժվում է ոչ ավելի, քան տասներկու տարի ժամկետով ազատազրկմամբ կամ հինգերորդ կատեգորիայի տուգանքով: Հոդված 243-ը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի կատարման համար այն անձի նկատմամբ, ով գտնվում է անգիտակից վիճակում, ֆիզիկապես չի կարող դիմադրել կամ տառապում է այնպիսի տկարամտությամբ կամ հոգեկան հիվանդությամբ, որ ամբողջությամբ կամ մասամբ զրկված է դիմադրելու կամ սեռական գործողության կապակցությամբ իր կամքն արտահայտելու հնարավորությունից: Նիդերլանդերի քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում այն դեպքերի համար, երբ 242-րդ հոդվածով նախատեսված սեռական գործողությունները կատարվում են տասներկու տարին չլրացած անձանց նկատմամբ[2]: Հոդվածի բովանդակությունից բխում է, որ այս դեպքում խոսքը չի վերաբերում բռնության գործադրմանը կամ դրա գործադրման սպառնալիքին, իսկ սահմանված պատիժը համահունչ է բռնաբարության համար սահմանված պատժին: Ըստ էության՝ մանկահասակի բռնաբարությունը Նիդերլանդների քրեական օրենսդրությամբ առանձնացված չէ որպես ծանրացնող հանգամանքով հանցակազմ, ինչը, մեր կարծիքով, անհիմն է:

Քննարկվող քրեաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ նիդերլանդական քրեական օրենսդրությունը «բռնաբարություն» եզրույթի ներքո միավորում է բռնության կամ ցանկացած բնույթի սպառնալիքի ազդեցությամբ սեռական գործողությունների կատարում, որը կապված է տուժողի մարմնի մեջ սեռական ճանապարհով ներթափանցման հետ և միտված է հանցավորի սեռական կրքերի բավարարմանը: Այստեղ տարանջատված չեն սպառնալիքի տեսակները, ինչը ևս, կարծում ենք, արդարացված չէ: Փաստորեն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140-ով նախատեսված արարքը հոլանդական օրենսդրության համաձայն համարվում է բռնաբարություն: Տարանջատված չեն նաև սեռական բռնության տեսակները, և բռնաբարության ներքո հասկացվում է ինչպես բնական սեռական հարաբերությունը, այնպես ել սեռական բնույթի գործողությունները, որոնք կապված են ներթափանցման հետ՝ «coitus per anum» և «coitus per os»:

Իսպանական քրեական օրենսդրությամբ[3] սեռական հանցագործությունները նախատեսված են «Սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ XIII-րդ բաժնում: Այս բաժնի առաջին գլուխը վերաբերում է «սեռական ագրեսիային»: Հոդված 178-ի համաձայն՝ նա, ով ոտնձգում է այլ անձի սեռական ազատության դեմ բռնությամբ կամ ահաբեկելով, մեղավոր է սեռական ագրեսիայի համար և պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով: Հոդված 179-ը պատասխանատվություն է սահմանում սեռական ագրեսիայի համար, որը կատարվել է օրալ կամ անալ ճանապարհով կամ որոշակի իրերի կամ առարկաների միջոցով տուժողի մարմին ներթափանցելով: Այսպիսով, իսպանական օրենսդրությունը, բացի բռնի բնական սեռական հարաբերությունից, տարբերակում է սեռական բռնության ևս երեք տեսակ: Ինչպես հետևում է այս իրավական նորմե-

[1] Уголовный кодекс Голландии: 2-е изд. / Под ред. Б.В.Волженкина. СПб., 2001.
[2] http://www.ejtn.eu/PageFiles/6533/2014%20seminars/Omsenie/WetboekvanStrafrecht_ENG_PV.pdf
[3] См.: Уголовный кодекс Испании / Под ред. **Н.Ф.Кузнецовой, Ф.М.Решетникова**. М., 1998.

րի բովանդակությունից, սեռական բռնության քննարկվող տեսակները պետք է կապված լինեն տուժողի մարմնի մեջ ներթափանցելու հետ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ հոդված 179-ով սեռական ագրեսիայի տեսակների համար սահմանված է ավելի խիստ պատասխանատվություն, քան հոդված 178-ով նախատեսված հանցատեսակի համար: Ստացվում է, որ բռնաբարության համար պատասխանատվությունն իսպանական օրենսդրությամբ ավելի մեղմ է, քան սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար: Այս մոտեցումը հազիվ թե կարելի է արդարացված համարել: Տեսության մեջ բազմիցս նշվել է, որ բռնաբարությունը թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեբանական հետևանքների առումով ավելի վտանգավոր հանցատեսակ է, և դրա համար պատասխանատվությունը պետք է ավելի խիստ լինի, քան սեռական բնույթի բռնի գործողությունների համար[1]:

Համաձայն Իսպանիայի քրեական օրենսգրքի հոդված 180-ի՝ 178 և 179 հոդվածներով նախատեսված հանցագործությունների ծանրացնող հանգամանքներն են՝

1) եթե կիրառված բռնությունը կամ ահաբեկումն ունեցել է վիրավորող կամ նվաստացնող բնույթ,

2) եթե արարքը կատարվել է երեք կամ ավելի անձանցից բաղկացած խմբի կողմից,

3) եթե տուժողը գտնվում է խոցելի վիճակում՝ կապված նրա հիվանդության, տարիքի կամ դրության հետ,

4) եթե հանցանքը կատարվել է վերընթաց կամ վարընթաց ազգակցական կապերն օգտագործելով, եղբոր կամ քրոջ կողմից, որդեգրվածի կողմից կամ նրա նկատմամբ,

5) եթե հանցանք կատարած անձն օգտագործել է այնպիսի գործիքներ կամ միջոցներ, որոնք վտանգավոր են կյանքի համար կամ կարող են հոդվածներ 149-ով կամ 150-ով նախատեսված վնաս պատճառել անձի առողջությանը[2]:

Մեր ուսումնասիրության համատեքստում հետաքրքրական է հոդված 180-ի երրորդ կետի քննարկումը: Այստեղ որպես սեռական ագրեսիայի որակյալ տեսակ նախատեսված է տուժողի խոցելի վիճակը՝ կապված նրա հիվանդության, տարիքի կամ դրության հետ: Փաստորեն տարիքի առումով խոցելիությունը համարվում է սեռական ագրեսիայի հանցատեսակի ծանրացնող հանգամանք, սակայն թե ինչ տարիքային խմբի մասին է խոսքը, որոշակիացված չէ, և սա կարող է խնդրահարույց լինել՝ հանգեցնելով օրենքի կամայական մեկնաբանության: Օրենսդրի նման մոտեցումը կարող է պայմանավորված լինել նաև իսպանական իրավակիրառների նկատմամբ բարձր վստահությամբ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քրեական օրենսգրքի[3] հոդված 236-ն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Բռնաբարությունը, որը կատարվել է կնոջ նկատմամբ բռնության կամ սպառնալիքի գործադրմամբ, պատժվում է՝...»: Հոդվածի դիսպոզիցիայից պարզ չէ, թե օրենսդիրն ինչ կոնկրետ բովանդակությամբ է ընկալում «բռնաբարություն» եզրույթը, արդյո՞ք ի նկատի են ունեցվում բացառապես հետերոսեքսուալ բնական հարաբերությունները, թե՞ նաև սեռական կրքերի բավարարման այլ եղանակները: Արական սեռի ներկայացուցիչների

---

[1] Տե՛ս **Игнатов, А.Н.** Особо тяжкие последствия изнасилования / **А.Н. Игнатов** // Советская юстиция. 1968. — № 10.

[2] Criminal Code of the Kingdom of Spain - Legislationline. *www.legislationline.org/documents/id/18769*

[3] Уголовный кодекс Китайской Народной Республики / Под ред. А.И. Коробеева. СПб., 2001.

նկատմամբ սեռական բռնություն գործադրելու համար ՉԺՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանված չէ: Հոդված 236-ի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում տասնչորս տարին չլրացած աղջկա նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար. դա գնահատվում է որպես բռնաբարություն: Քննարկվող քրեաիրավական նորմի բովանդակությունից բխում է նաև, որ այս պարագայում խոսքը բռնության կամ դրա սպառնալիքի մասին չէ. բավական է միայն նշված գործողությունների կատարումը[1]: Անչափահաս տղաներին սեռական բռնությունից պաշտպանող առանձին քրեաիրավական նորմեր ՉԺՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված չեն, ինչը, մեր կարծիքով, օրենսդրական լրջագույն բաց է:

Այսպիսով՝ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ սահմանված երեխաների դեմ կատարվող բռնի սեռական հանցագործությունների իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա կարելի է կատարել մի շարք եզրահանգումներ, մասնավորապես.

1. Դրանց քրեական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ գերակշիռ մասում պատասխանատվություն է սահմանվում ինչպես բռնաբարության որպես բռնություն գործադրելով, դրա գործադրման սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով բնական սեռական հարաբերության, այնպես էլ սեռական բնույթի բռնի գործողությունների համար: Ասվածը վկայում է այն մասին, որ սեռական ագրեսիայի զոհեր կարող են համարվել թե՛ իգական և թե՛ արական սեռի ներկայացուցիչները, չնայած որոշ դեպքերում նախատեսված են բացառություններ:

2. Ուսումնասիրված երկրների քրեական օրենսգրքերում ոչ միշտ է տրվում սեռական բնույթի գործողությունների հստակ բնութագիրը կամ նկարագիրը. բավարարվում եմ միայն գնահատողական հասկացությունների օգտագործմամբ, ինչպես, օրինակ՝ «սեռական հարաբերություններ, որոնք տարբերվում են բնական սեռական ակտից», «սեքսուալ գործողություններ», «այլասերված արարքներ», «բռնություն գործադրելով անառակաբարո գործողություններ», «բռնի կերպով սեռական կրքերի բավարարում խաթարված եղանակով», «անօրինական բռնի սեռական ակտ» և այլն: Նման մոտեցումը, մեր կարծիքով, անընդունելի է և կարող է հանգեցնել բարդությունների իրավակիրառ պրակտիկայում, նախադրյալներ ստեղծել օրենքի ոչ միատեսակ մեկնաբանության, խաթարել իրավական որոշակիության ապահովման սկզբունքը:

3. Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ փորձ է կատարվել հստակեցնելու սեռական բնույթի գործողությունների շրջանակը: Ընդ որում առանձնացվում են քննարկվող հիմնախնդրի լուծման երկու հիմնական մոտեցումներ: Առաջինի համաձայն՝ սահմանվում է սեքսուալ գործողությունների հստակ շրջանակ, որը թույլ չի տալիս, որ քրեական օրենքը ստանա տարածական մեկնաբանություն: Օր.՝ իսպանական քրեական օրենսդրությամբ խոսվում է ֆիզիոլոգիական սեռական ակտի, ինչպես նաև անալ կամ օրալ սեռական հարաբերության կամ որոշակի իրերի կամ առարկաների միջոցով տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման մասին: Երկրորդ մոտեցման համաձայն՝ սեքսուալ գործողությունները հստակ չեն թվարկվում, այլ առանձնացվում են այդ արարքների հատկանիշները: Օր.՝ Ֆրանսիայի, Նիդերլանդների քրեական օրենսդրությամբ խոսվում է տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման մասին: Այս դեպքում նկատի է ունեցվում ցանկացած սեռական ներթափանցում, անկախ սեռական հարաբերության եղանա-

[1] http://www.fmprc.gov.cn/ce/cgvienna/eng/dbtyw/jdwt/crimelaw/t209043.htm

կից: Որոշ երկրների օրենսդրությամբ տրվում է սեռական հարաբերությունների և սեքսուալ բնույթի գործողությունների որոշակի միջանկյալ բնութագիր: Դրանցում խոսվում է բնական սեռական հարաբերության, արվամոլության, լեզբիականության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների մասին: Սակայն սեքսուալ բնույթի այլ գործողությունների հասկացությունը հստակ չի տրվում, ինչը կարող է հանգեցնել տարամեկնաբանությունների: Կարծում ենք՝ առավել ճիշտ է երկրորդ մոտեցումը, որի դեպքում սեքսուալ բնույթի գործողությունները հստակ չեն թվարկվում, սակայն տրվում են այն անհրաժեշտ հատկանիշները, որոնց շնորհիվ հնարավոր է այս գործողությունները հստակ տարբերակել նմանաբնույթ արարքներից, օրինակ՝ անառակաբարո գործողություններից: Բանն այն է, որ սեքսոլոգիայում սեքսուալ բնույթի գործողությունների միասնական հասկացություն գոյություն չունի[1], դրանք կարող են ամենաբազմազան բնույթ ունենալ, իսկ քրեական օրենսդրության մեջ նման անորոշ հասկացության կիրառումն անընդունելի է: Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում (ինչպես նաև նոր քրեական օրենսգրքի նախագծում) կատարել համապատասխան փոփոխություն՝ նշելով, որ սեռական բնույթի բռնի գործողությունները պետք է կապված լինեն տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ: Կարելի է նաև ներթափանցմամբ զուգորդված սեռական բնույթի բռնի գործողությունները նախատեսել որպես քննարկվող հանցագործության որակյալ տեսակ, քանզի ոչ բոլոր սեռական բնույթի գործողություններն են կատարվում տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ, օրինակ՝ լեզբիության շատ դրսևորումներ կամ մանուալ սեքսի որոշ դրսևորումներ այդպիսիք չեն:

4. Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում այն դեպքերի համար, երբ սեռական բռնության զոհ են դառնում անչափահասները (երեխաները): Ընդ որում, ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից, նշված պատասխանատվությունը դիֆերենցվում է: Որոշ առումով անհասկանալի է այն մոտեցումը, որ անչափահասներն առանձնացվում են որպես սեռական ագրեսիայից տուժողների առանձին կատեգորիա, սակայն նրանց դեմ կատարված սեռական հանցագործության համար պատժի խստացում չի նախատեսվում: Որոշ երկրների քրեական օրենսգրքերում սեռական հանցագործություններից տուժողների շարքում անչափահասները չեն առանձնացվում, և նրանց դեմ կատարված սեռական բռնությունը որակվում է ընդհանուր հիմունքներով: Կարծում ենք՝ այս մոտեցումը նույնպես ՀՀ քրեական օրեսդրության զարգացման համատեքստում ճիշտ համարվել չի կարող: Ընդհակառակը՝ պետք է առավելագույն տեսական և գործնական ջանքեր գործադրվեն անչափահասներին սեռական բռնության ցանկացած դրսևորումից պաշտպանելու համար:

5. Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուշագրավ առանձնահատկություններից է նաև այն, որ որպես բռնի սեռական հանցագործությունների որակյալ տեսակ սահմանվում է հանցանքը վերընթաց ազգակցական կապերն օգտագործելով կատարելը, ծնողի, որդեգրողի կամ այն անձի կողից կատարելը, որի դաստիարակության կամ խնամքի ներքո է գտնվում երեխան, կամ որից երեխան գտնվում է ծառայողական կամ աշխատանքային կախվածության մեջ: Համանման որակյալ տեսակ սահմանվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138-ի և հոդված 139-ի երրորդ մասի առաջին կետով: Նշված ծանրացնող հանգամանքն ունի հետևյալ ձևակերպումը՝ «..տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիա-

[1] Տե՛ս **Шелыгин К.В., Тахтарова Е.П.** Сексология: учебное пособие / под ред. П.И. Сидорова. Архангельск: Северный государственный медицинский университет, 2006, էջ 37:

ռակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն»: Այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը հույժ կարևոր է և արդարացված, սակայն, կարծում ենք, այն պետք է վերաձևակերպվի: Ինչպես տեսնում ենք, արտասահմանյան մի շարք երկրներում խոսվում է վերընթաց ազգակցական կապերն օգտագործելով երեխայի նկատմամբ սեռական հանցագործություն կատարելու մասին: Նշված անձանց կողմից երեխայի նկատմամբ հանցանքի կատարումը ևս օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ: Օրինակ՝ կարծում ենք, որ ավագ քրոջ, եղբոր, պապի, տատի, հորեղբոր կամ այլ ազգականի կողմից երեխայի նկատմամբ սեռական հանցանք կատարելը պակաս վտանգավոր չէ, քան ծնողի կողմից կատարելը, և պետք է նույնքան խիստ պատժվի: Առաջարկում ենք, վերոնշյալ ծանրացնող հանգամանքը ձևակերպել հետևյալ կերպ. «Տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի, վերընթաց ազգականի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական, կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ որից երեխան գտնվում է աշխատանքային կամ ծառայողական կախվածության մեջ»:

Վերոշարադրյալի հիման վրա կարծում ենք, որ արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը հույժ կարևոր է ՀՀ քրեական օրենսդրության լրամշակման առումով, իսկ կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկությունները կարող են նպաստել երեխային սեռական ագրեսիայից պաշտպանելուն միտված իրավակարգավորումների կատարելագործմանը:

ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НАСИЛЬСТВЕННЫЕ ПОЛОВЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ПО УГОЛОВНОМУ ПРАВУ ЗАРУБЕЖНЫХ СТРАН

Эдгар Карапетян
Соискатель кафедры уголовного права ЕГУ

В статье проанализированы специфические особенности уголовной ответственности за насильственные половые преступления против несовершеннолетних по уголовному праву зарубежных стран. УК ряда стран трактуют сексуальные действия весьма неопределенно, не описывая их признаков, ограничиваясь лишь оценочными понятиями. Изучение соответствующих положений УК зарубежных стран свидетельствует о том, что большинством из них предусматривается более строгое наказание за совершение насильственных половых преступлений в отношении детей, что представляется вполне обоснованным, хотя УК многих, довольно развитых, стран такого ужесточения не предусматривает, что парадоксально. Автор предлагает ряд мер, которые направлены на усовершенствование уголовного законодательства РА с целью более всесторонней защиты половой неприкосновенности и половой свободы несовершеннолетних.

FEATURES OF CRIMINAL LIABILITY FOR VIOLENT SEXUAL CRIMES AGAINST MINORS IN THE CRIMINAL LAW OF FOREIGN COUNTRIES

Edgar Karapetyan
Ph.D. Student of the YSU Chair of Criminal Law

The article analyzes specific features of criminal responsibility for violent sexual crimes against minors in the criminal law of foreign countries. The criminal codes of a number of states treat sexual acts very vaguely, not specifically mentioning any of them, without describing their characteristics, confining themselves to appraisal concepts. The study of the relevant provisions of the Criminal Code of foreign countries indicates that most of them envisage a more severe punishment for committing violent sexual crimes against minors, which seems to be reasonable, although many, rather developed, countries do not provide such tightening, that paradoxically. The author proposes a number of measures aimed to improve the criminal legislation of the Republic of Armenia with a view to more comprehensive protection of sexual inviolability and sexual freedom of minors.

Բանալի բառեր – *անչափահասներ, երեխա, բռնի սեռական հանցագործություններ, սեռական ոտնձգություններ, ֆիզիկական բռնություն, սպառնալիք, բռնաբարություն, սեռական ագրեսիա, սեքսուալ բնույթի գործողություններ, ներթափանցում*
Ключевые слова: *несовершеннолетние, дети, насильственные сексуальные преступления, сексуальные домогательства, физическое насилие, угрозы, изнасилование, сексуальная агрессия, сексуальная активность, проникновение*
Key words: *minors, children, violent sexual crimes, sexual harassment, physical violence, threats, rape, sexual aggression, sexual activity, penetration*